

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» 01 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ ակադ. Մ.Գ.Մանվելյանի անվ. Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը, (ՀՀ ԳԱԱ ԸԱՔԻ) ի դեմս տնօրեն Վարեն Գրիգորյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), “ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ” ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված 121768,3(Մեկ հարյուր քսան մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուսու յոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, այդ թվում՝ նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,



2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառոված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## 2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կումիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառոված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կումիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## 2.3 Կումիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## 2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կումիտե հանձնել սահմանված ժամկետում,



- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Օրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
- 2.4.6 Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Օրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Օրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Օրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
- 2.4.11 Օրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

### 3 Օրագրի ֆինանսավորման չափը

Օրագրի ֆինանսավորման չափը կազմում է 121768,3(Մեկ հարյուր քսան մեկ միլիոն յոկ հարյուր վաթսույն ութ հազար երեք հարյուր ) ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)



#### 4 Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

#### 5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

#### 6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

#### 7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

#### 8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են



երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

Ընդհանուր և անօրգանական քիմիայի

ինստիտուտ, ՊՈԱԿ

Արդության փ. 2 նրբ., տուն 10


Հ/հ 900018005703

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 00007282


Տնօրեն՝ Կ.Գրիգորյան

(ստորագրություն)



Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)



(Կարեն Գրիգորյան)  
(անուն անգանդով)



Հավելված N 1  
N Ե-11 «25» 01 2021թ.  
պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Կարեն Գրիգորյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «25» 01 2021 թ. N Ե-11 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 121768,3 (Մեկ հարյուր քսան մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր ՀՀ դրամ գումարի չափով):

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Ընդհանուր և անօրգանական քիմիայի  
ինստիտուտ

Նախագահ

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Տնօրեն՝

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ  
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

1. Ֆուկցիոնալ նշանակության նոր նյութերի սինթեզը, հատկությունների ուսումնասիրությունը և շահավետ տեխնոլոգիաների մշակումը:

2. Նանոչափի նյութերի և դրանց հիմքով նանոկոմպոզիտների ստացումը և ուսումնասիրությունը

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Աշխատանքը կատարվելու է ըստ օրացուցային պլանի և նշված ժամկետներում կներկայացվեն հաշվետվություններ: Եթե որևէ աշխատանք ըստ օրացուցային պլանի չի կատարվում օբյեկտիվ պատճառներով, ապա անհրաժեշտ է տեղեկացնել պատվիրատուին՝ հիմնավորելով այն: Այս դեպքում չկատարված աշխատանքը անհրաժեշտ է փոխարինել ընդհանուր խնդրի հետ տրամաբանորեն կապված նույն ծավալով մեկ այլ փուլի

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Մ. Գ. Մանվելյանի անվան Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետազոտությունների հիմնական ուղղությունները կապված են հանրապետության ոչ մետաղական և դժվարահալ հանքանյութերի, բազմամետաղային հանածոների և արտադրական թափոնների համալիր վերամշակման, տարրերի բարձր կորզմամբ նոր տեխնոլոգիաների մշակման, բարելավված հատկություններով նոր բաղադրության բյուրեղային, ամորֆ, ապակեբյուրեղային նյութերի, նանոչափ մասնիկների ստացման տեսական հիմունքների մշակման, նոր հատկություններով կոմպոզիտների ստացման և



ներդրման, հանքային շրջանների և հանքային դաշտերի բնապահպանական և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաքիմիական համալիր որոնումների մեթոդոլոգիայի մշակման հետ:

Հանրապետության տնտեսության և գիտության զարգացման համար բարրելավված հատկություններ ունեցող ֆունկցիոնալ նշանակության նյութերի, նանոչափ մասնիկների, բյուրեղային և ապակե կիսահաղորդիչների, մագնիսաօպտիկական նյութերի, ջերմա կայուն կերամիկայի և դրանց հիման վրա կոմպոզիտների ստացումն ու տեխնոլոգիաների մշակումը արդիական և հեռանկարային խնդիր է: Այն նաև գերակայուն է, որը պայմանավորված է տեղական սիլիկատային և բազմամետաղ հանքատեսակների հարուստ պաշարներով, նրանց համալիր մշակման ինտենսիվ նոր տեխնոլոգիաների, որակապես նոր վիճակում գտնվող միկրոկառուցվածքային մասնիկների, նանոկոմպոզիտների մշակման անհրաժեշտությամբ և նրանց կիրառմամբ զարգացող նոր գիտատեխնիկական ուղղություններում և արտադրությունում: Զարգացնել և խորացնել տեսական նշանակություն ունեցող նոր գիտական ուղղություններ և նոր տեխնոլոգիաներ՝


- Ռեզոնորված և նանոկառուցվածքավորված բյուրեղացման պրոցեսի ուսումնասիրությունն այլումաբորոսիլիկատային օքսիֆտոքիդային ապակիներում, թափանցիկ օպտիկական ակտիվ ապակեկերամիկական ու այլումինատային կապակցող նյութերի մշակում:
- Բարձր ջերմաստիճանային կապակցող նյութերի ստացում և հետազոտում:
- Նոր հատկություններով նանոկոմպոզիտային նյութերի ստացման տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակում:
- Էլեկտրոնային տեխնիկայի համար ցածր ջերմաստիճանային թրծման (LTCC) կերամիկական ու ապակեկերամիկական նյութերի սինթեզ և նրանց հատկությունների ուսումնասիրություն, ինչպես նաև լեգիրացված ավաստային կերամիկայի ստացման տեխնոլոգիայի մշակում:
- Քիմիապես ակտիվ հիդրոսիլիկաժելով և II խմբի մետաղների միացություններով ֆունկցիոնալ նշանակության մի շարք սիլիկատային միացությունների սինթեզ և անցումային մետաղների ներմուծմամբ լյումինեսցենտային նյութերի ստացում
- Վանադատային պոլիօքսիմետաղների ցածրամոլեկուլային, նոր β միջուկային ձևերի սինթեզը, նրանց հատկությունների ուսումնասիրությունը և կիրառության հնարավորությունների բացահայտումը




- Միկրոալիքային ճառագայթման ազդեցության ուսումնասիրությունը իտրիումի սիլիկատների եւ  $Y_2O_3-Al_2O_3-SiO_2$  համակարգում ֆունկցիոնալ նյութերի ստացման մեխանիզմի վրա
- Հավելանյութերի ազդեցության ուսումնասիրությունը Հայաստանի հրաբխային և նստվածքային ապարներից ոչ ավտոկլավային, հիդրոքիմիական եղանակով կալցիումի հիդրոսիլիկատների ստացման ընթացքում:
- Ֆերոմագնիսական և մագնիսաօպտիկական հատկություններով ապակիների մագնիսական և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում:
- Ռադիացիոն կայուն կոմպոզիտային նյութերի, այդ թվում շինանյութերի մշակում:
- Հայաստանի մետաղական օքսիդացած և խառը հանքանյութերի վերամշակման ու կորզման տեսական և էկոլոգիապես պաշտպանված տեխնոլոգիական հիմունքների մշակումը
- Հանքային ապարների (բենտոնիտ, ցեոլիտ, դիատոմիտ, հիդրոսիլիկատներ) ու կորիզային հումքի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրությունը և դրանց հիմքով սորբենտների ու իոնափոխիչների ստացումը
- Նոր հետերաֆազ ռադիկալաշղթայական քիմիական փոխարկման պրոցեսների մշակում և կարևոր հատկություններով ու բնութագրերով արժեքավոր նյութերի ստացում:
- ՀՀ Հանքային շրջանների և դաշտերի էկոլոգիաերկրաքիմիական և բնապահպանական գնահատում


5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:


Կազմակերպության  
ունօրեն (ոեկտոր)՝

  
(ստորագրություն)

  
(անուն ազգանուն)

Օրագրի գիտական ղեկավար՝

  
(ստորագրություն)

  
(անուն ազգանուն)




**ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ**  
**ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ**  
**ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ**  
**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ** ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	Նոր տեխնոլոգիաների մշակում, ֆուկցիոնալ նշանակության նոր նյութերի ստացում Երկրաքիմիական հետազոտություններ	Նոր նյութերի սինթեզ, հատկությունների և կառուցվածքի ուսումնասիրություն	Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում	հողվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում,	1-ին եռամսյակ	24353,6
	Տեղական հումքից նանոկառուցվածքային նյութերի ստացում և ուսումնասիրություն Կապարային օքսիդացած հանքանյութերի կորզման տեսական հիմունքների մշակում:	Սինթեզ, հատկությունների ուսումնասիրություն	Համալիր վերամշակում	հողվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հողվածների տպագրում	2-րդ եռամսյակ	30442,075
	Բաց համակարգերում ֆազային դիագրամների պինդ, լլուծույթների առաջացման, ֆազերի բյուրեղացման ընթացքի հետազոտություն; Ամորֆ և բյուրեղային նյութերի փոխարկումների տեսական հիմունքների և օրինաչափությունների	Տեսական և փորձնական ուսումնասիրություններ	Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում	հողվածների տպագրում, միջազգային գիտաժողովի անցկացնում	3-րդ եռամսյակ	30442,075



բացահայտում:					
<p>Նյութերի ստացման նոր եղանակների մշակում: Հրաբղային ապարների թափոնների կոնստրուկցիոն նյութերի մշակում միկրոալիքային սինթեզի եղանակով Քիմիապես ակտիվ հիդրոսիլիկաժելով և II խմբի մետաղների միացություններով ֆունկցիոնալ նշանակության մի շարք սիլիկատային միացությունների սինթեզ և անցումային մետաղների ներմուծմամբ լյումինեսցենտային նյութերի ստացում:</p>	<p>Սինթեզ, հատկությունների ուսումնասիրում</p> <p>Սինթեզ, հատկությունների ուսումնասիրում,</p>	<p>Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում</p> <p>լաբորատոր փորձարկումներ</p>	<p>Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածների տպագրում</p>	<p>4-րդ եռամսյակ</p>	<p>36530,55</p>
Ընդամենը					121768.3

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝




(ստորագրություն)

(Կարեն Գրիգորյան)

(անուն ազգանուն)

Օրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Կարեն Գրիգորյան)

(անուն ազգանուն)




**ՆԱԽԱՀԱՇԻՎ**  
**ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ**  
**ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ**  
**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ** ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

*հազար դրամ*


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	102 700.0	20 540.0	25 675.0	25 675.0	30 810.0
2	տնտեսական և այլ ծախսեր*	19 068.3	3 813.7	4 767.1	4 767.1	5 720.5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>121 768.3</b>	<b>24 353.7</b>	<b>30 442.1</b>	<b>30 442.1</b>	<b>36 530.5</b>

Կազմակերպության  
տնօրեն (ոեկտոր)՝

  
 (ստորագրություն)

( Վ. Գրիգորյան )  
 (անուն ազգանուն)

Կազմակերպության  
գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն)

( Ս. Քոչարյան )  
 (անուն ազգանուն)



\* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ<sup>†</sup>

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	11 638.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	10 000.0
	գազի ծառայություն	-
	ջրամատակարարման ծառայություն	700.0
	կապի ծառայություն	794.0
	աղբահանություն	144.0
2	Գույք	300.0
3	Սարքեր և սարքավորումներ	1 500.0
4	Նյութեր	800.0
5	Գործուղումներ	300.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
	.....	4 530.3
Ընդամենը		19 068.3

Կազմակերպության տնօրեն՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) ( Կ. Գրիգորյան ) (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) ( Մ. Քոչարյան ) (անուն ազգանուն)



\* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում



**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ**  
**ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ ԵՎ**  
**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ** ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1.	Գրիգորյան Կարեն	Տնօրեն, լաբ. վարիչ	տ. գ. թ.	185000
2.	Կնյազյան Նիկոլայ	Փոխտնօր., լաբ. վարիչ	տ. գ. դ.	160000
3.	Մարգարյան Դավիթ	Փոխտնօրեն		115000
4.	Մանուկյան Գոհարիկ	Գիտ. քարտուղար	տ. գ. թ.	110000
5.	Քոչարյան Մարիամ	Գլխավոր հաշվապահ		170000
6.	Մախիյան Համեստ	Ավագ հաշվապահ		89610
7.	Արևյան Ռոմիկ	1-ին բաժնի վարիչ, ինժեներ, գանձապահ		89610
8.	Աբրահամյան Ժաննա Մարտունի	Ընդ. բաժնի պետ		105000
9.	Աբրահամյան Աշոտ համատեղող	Իրավախորհրդատու		126000
10.	Սահակյան Մարիետա	Գրադարանի վարիչ		89610
11.	Ղանդուկյան Արայիկ	Համակ. ծառ. ղեկ.		45513
12.		Պահեստապետ		45513
13.	Կիրակոսյան Մանվել	Փականառործ		89610
14.	Մխիթարյան Հակոբ	Էլեկտրիկ		89610
15.	Յավրյան Արմեն	Վարպետ		89610
16.	Պապյան Լիլիթ	Հավաքարար		93290
17.	Մելքոնյան Մարգարիտա	Հավաքարար		93290
18.	Հայրիկյան Էլզա	Լաբ. վարիչ	ք. գ. թ.	95000
19.	Կարապետյան Արմինե	Գ. ա.		89610
20.	Օհանյան Նատելլա	Գ. ա.		89610
21.	Միրզոյան Լատուրա	Գ. ա.		89610
22.	Բաղդասարյան Լիլիթ	Կ. գ. ա.		93290
23.	Կոստանյան Արամ	Լաբ. վարիչ	տ. գ. թ.	114000
24.	Մարգարյան Կարինե	Գ. ա.		89610
25.	Կարախանյան Գոհար	Գ. ա.		89610
26.	Մանուկյան Հասմիկ	Ա. գ. ա.	ք. գ. թ.	89610
27.	Ավագյան Անդրանիկ	Գ. ա.		89610
28.	Գուրգենյան Նինել	Լաբ. վարիչ	տ. գ. թ.	98000
29.	Ստեփանյան Յոլակ	Գ. ա.		45513
30.	Կոստանյան Մելիդա	Գ. ա.		89610
31.	Գրիգորյան Աիդա	Գ. ա.		89610
32.	Մարտիրոսյան Աննա	Կ. գ. ա.		93290




33.	Վարդանյան Նվարդ	Լաբորանտ		93290
34.	Գալոյան Կարինե	Գ.ա.		89610
35.	Կումկումաջյան Ելենա	Ա.գ.ա.	ք.գ.թ.	89610
36.	Խաչատրյան Ազատուհի	Գ.ա.		89610
37.	Սահարունյան Ալիսա	Գ.ա.		89610
38.	Մկրտչյան Սվետլանա	Ավ. լաբ.		89610
39.	Թորոյան Վահան	Գ.ա.		89610
40.	Գրիգորյան Տաթևիկ	Գ.ա.	տ.գ.թ	93290
41.	Ապրեսյան Լեյլի	Գ.ա.		89610
42.		կ.գ.ա.		47651
43.	Գասպարյան Լուսինե (համատեղող)	Գ.ա.	տ.գ.թ	47651
44.	Զուլումյան Նշան	լաբ.վարիչ	ք.գ.դ.	140000
45.	Իսահակյան Աննա	Առաջատար գ.ա.	տ.գ.թ	89610
46.	Ղազանչյան Աիդա	Գ.ա.		89610
47.	Սեմերջյան Հովհաննես	Գ.ա.		89610
48.	Հովսեփյան Թամարա	Գ.ա.		89610
49.	Թերզյան Աննա	Ա.գ.ա.		93290
50.	Բեգլարյան Հայկ	Խմբի ղեկավար	ք.գ.թ.	93290
51.	Ավալյան Ռայիսա	Ավ. լաբ.		93290
52.	Մելիքյան Ստելլա (համատեղող)	կ.գ.ա.		47651
53.	Թաթարյան Աշոտ	Խմբի ղեկ.	տ.գ.թ	45513
54.	Հարությունյան Վեներա	Գ.ա.		89610
55.	Բաղրամյան Վոլոդյա	լաբ.վարիչ	տ.գ.թ	103000
56.	Քոչարյան Լիդա	Ավ.լաբ		45513
57.	Սուխուդյան Գոհար	Գ.ա.		89610
58.	Ասլանյան Աիդա	Գ.ա.		45513
59.	Խոստոյան Ֆլորա	Գ.ա.		89610
60.	Մարգարյան Անահիտ	Առաջատար գ.ա.	ք.գ.թ.	89610
61.	Մանթաշյան Կորյուն	լաբ.վարիչ	ք.գ.թ.	98000
62.	Մանթաշյան Ստելլա (համատեղող)	Գ.ա.		45513
63.	Դոնոյան Արուսյակ	Ավագ ճարտարագետ		89610
64.	Եսայան Արսեն	Ավ.լաբ.		89610
65.	Աբրահամյան Մերի	Գ.ա.		93290
66.	Զապրոպյան Արթուր (համատեղող)	Ա.գ.ա.		45513
67.	Մանուկյան Ռիմա	Ա.գ.ա., խմբի ղեկ.	տ.գ.թ	89610
68.	Արսենյան Նաիրրա (համատեղող)	կ.գ.ա.		45513
69.	Նազարյան Էդիտա	լաբ.վարիչի ժ.սլ.	ք.գ.թ.	100000
70.	Մարգարյան Անահիտ	Գ.ա.		89610
71.	Առաքելյան Ալեքսանդր	Գ.ա.		45513
72.	Մակարյան Իրինա	Գ.ա.		45513
73.	Աղամյան Էլլադա	Գ.ա.		89610
74.	Արուստամյան Անետտա	Գ.ա.		89610
75.		Ա.գ.ա.		89610
76.	Բագինովա Լյուսյա	Ա.գ.ա.	տ.գ.թ	89610
77.	Հարությունյան Գալինա	Ա.գ.ա.	տ.գ.թ	89610
78.	Հայրապետյան Սուրեն	Ա.գ.ա.	ք.գ.թ.	89610
79.	Խաչատրյան Աննա	Ա.գ.ա.	տ.գ.թ	89610
80.	Ազնաուրյան Ասյա	Գ.ա.		45513



81.	Էդիլյան Կարեն	կ.գ.ա.		89610
82.	Հովսեփյան Արմեն	լաբ.վարիչ	տ.գ.թ	98000
83.	Հակոբյան Ասյա	կ.գ.ա.		93290
84.	Հարությունյան Սիրանուշ	Գ.ա.	տ.գ.թ	93290
85.	Գասպարյան Ռուբեն	կ.գ.ա.		93290
86.	Մաֆարյան Տաթևիկ	Գ.ա.	տ.գ.թ	93290
87.	Մարտիրոսյան Վարդան	լաբ.վարիչ	տ.գ.թ	95000
88.	Ղազինյան Անահիտ	Գ.ա.		89610
89.	Մարկիզովա Յուլյա	Գ.ա.		89610
90.	Հակոբյան Նինա	Ավ.լաբ.		89610
91.	Հարությունյան Լևոն	լաբ.վարիչ	Ե.գ.թ.	120000
92.	Դաշտոյան Եվգենյա	կ.գ.ա.		89610
93.	Փաշայան Ռոմելա (համատեղող)	Ա.գ.ա.	Ե.գ.թ.	45513
94.	Ղազարյան Ռաֆայել	լաբորանտ		93290
95.	Մելիքջանյան Հասմիկ	լաբորանտ		89610
96.	Պողոսյան Մանուկ	Ա.գ.ա, խմբի ղեկ	տ.գ.թ.	89610
97.	Մարգարյան Մարինե	Ավ.լաբ.		89610
Ընդամենը				8556862

Կազմակերպության  
տնօրեն (ռեկտոր)՝

  
(ստորագրություն)

( Վ. Գրիգորյան )  
(անուն ազգանուն)

Կազմակերպության  
անձնակազմի կառավարման  
բաժնի պետ՝

  
(ստորագրություն)

( Տ.Աբրահամյան )  
(անուն ազգանուն)

